ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ 17. 02. 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Շիրակացու ճեմարանի առաքելությունը 3
2. Գնահատման փիլիսոփայությունը 3
3. Գնահատման նպատակը 3
4. Գնահատման սկզբունքները 4
5. Միջին դպրոցում կիրառվող գնահատման տեսակները 4
6. Գնահատման փուլերը 4
6.1 Գնահատում 4
6.1.1 Ուսուցանող / ձևավորող գնահատում 4
6.1.2 Միավորային գնահատում 6
6.1.3 Սովորողների՝ դասարանից դասարան փոխադրման կարգը 9
6.1.4 Գնահատման ստանդարտացում 9
6.2 Գրանցում (Recording) 10
6.3 Հաշվետվություն 11
6.3.1. Կիսամյակային հաշվետվություն 11
6.3.2. Ընթացիկ հաշվետվություններ 11
6. 3. 3. Ծնողական խորհրդաժողովներ 11
6.3.4. Աշակերտական խորհրդաժողովներ 11
7. Սովորողի նկարագրի ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ վերլուծություն 12
8. ՄԲ նախագծերի իրականացում 12
9. Դպրոցի, ուսուցչի, սաների և ծնողների դերը գնահատման գործընթացում 12
9.1. Դպրոցի տնօրենության խորհրդի դերը 12
9.2 . Ուսուցչի դերը 13
9.3. Սովորողի դերը 13
9.4. Ծնողական համայնքի դերը 13
10. Գնահատման առանձին դեպքերը 13
11. Կազմակերպչական աշխատանք 14
Հավելվածներ 16

1. ՇԻՐԱԿԱՑՈՒ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Ճեմարանի առաքելությունն է՝
Կերտել ազգային հենքի վրա ձևավորված համամարդկային արժեքներ կրող իսկական մտավորական և քաղաքացի:
ՄԲ առաքելությունն է՝

Կերտել հետաքրքրասեր, բանիմաց և հոգատար երիտասարդներ, որոնք միջմշակութային փոխըմբռնման և հարգանքի շնորհիվ կստեղծեն ավելի լավ ու ավելի խաղաղ աշխարհ :

2. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Ճեմարանի միջին դպրոցում գնահատումը իրականացվում է ինչպես Հայաստանի Հանրապետության պետական և առարկայական, այնպես էլ Միջազգային բակալավրիատի առարկայական չափորոշիչների և չափանիշների հիման վրա: Հիշյալ փաստաթղթերը սահմանում են սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձեռքբերման ակնկալվող, չափորոշչային մակարդակը: Չափորոշիչները շեշտադրում են սովորողների նկարագրի բնութագրիչների, արժեքային համակարգի ձևավորումը և շարունակական կատարելագործումը:

2.2. Միջին դպրոցում գնահատման համակարգը խթանում է սովորողների ուսումնառության գործընթացը:

2.3. Սովորողների ձեռք բերած գիտելիքների, կարողությունների գնահատումը ուսուցման և ուսումնառության ողջ գործընթացի անբաժանելի մասն է կազմում:

2.4 Գնահատումը միջին դպրոցում իրականացվում է հստակ չափանիշներով:

3. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Կատարելագործել սովորողի գիտելիքների, կարողությունների ու հմտությունների ձեռքբերման, անձնային աճի և ուսումնառության գործընթացը, վերահսկել ուսման որակը՝ խթանելով սովորողի ներուժի առավելագույն զարգացումը:

Գնահատումը՝

- թույլ է տալիս մշտապես դիտարկել սովորողի ուսումնական գործունեությունը, պարբերաբար ապահովում է հետադարձ կապ և արձանագրում է ձեռքբերումները.
- խթանում է առարկայի՝ խորությամբ ընկալումը իրական կյանքում ընթացող հետազոտությունների միջոցով.
- խթանում է *քննադատական* և *ստեղծարար* մտածողության զարգացումը.
- հնարավորություն է տալիս սովորողին առարկայական հմտությունները կիրառել միջառարկայական կապեր ստեղծելիս և անհատական նախագիծ իրականացնելիս.
- ուսուցիչներին, դպրոցի տնօրենությանը, համայնքին, նաև վերադաս մարմիններին տրամադրում է լիարժեք և հավաստի տեղեկություն սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների մակարդակի մասին.

- ծնողներին տրամադրում է հիմնավորված տեղեկություն յուրաքանչյուր սովորողի ուսումնառության որակի, ձեռքբերումների և առաջընթացի մասին.
- հնարավորություն է տալիս դիտարկել, բարելավել կրթական ծրագրերի բովանդակությունը, դասավանդման մեթոդական համակարգը:

4. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

4.1. Գնահատումը ուսումնառության և դրա կատարելագործման վերաբերյալ փաստեր, հավաստի տվյալներ հավաքելու շարունակական գործընթաց է. արտացոլում և տարբեր կողմերից ներկայացնում է առկա լավագույն փորձը, խթանում է սովորողների և ուսուցիչների համատեղ գործունեության արդյունավետ զարգացումը:

4.2. Արդյունավետ գնահատումը նախապես պլանավորված է, հավաստի, համարժեք, անաչառ, արժանահավատ, հուսալի, թափանցիկ[1]:

4.3. ճեմարանը շեշտադրում է սովորողների կրթական առաջընթացը՝ կարևորելով ինչպես ողջ գործընթացի, այնպես էլ ստացված արդյունքի որակական կողմը:

5. ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Միջին դպրոցում կիրառվում է գնահատման երկու տեսակ՝ ներքին և արտաքին:

5.1. *Ներքին գնահատումը* իրականացնում են ուսուցիչները, առարկայական ամբիոնները և տնօրենությունը:

5.2. *Արտաքին գնահատումն* իրականացնում են Միջազգային բակալավրիատի (IB) գրասենյակը և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության համապատասխան կառույցը:

6. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Գնահատման ողջ գործընթացը բաժանվում է երեք փոխկապակցված փուլերի.

Ա. Գնահատում. բացահայտվում է՝ ի՛նչ գիտեն և ի՛նչ են սովորել սովորողները:

Բ. Գրանցում. հավաքվում, վերլուծվում և ամփոփվում են տվյալները:

Գ. Հաշվետվություն. ներկայացվում են տեղեկությունները կամ գնահատման արդյունքները:

6.1 ԳՆԱՀԱՏՈՒՄ

«Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիրի միջին դպրոցում սովորողի ուսումնառության ընթացիկ գնահատման ձևերն են՝ **միավորային (ամփոփիչ) և ուսուցանող (ձևավորող) :**

6.1.1 ՈՒՍՈՒՑԱՆՈՂ / ՁԵԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ուսուցանող/ձևավորող գնահատումը ուղղված է՝

[1] Isabel Nisbet (Cambridge Assessment; former Ofqual chief executive)

- սովորողի՝ ուսումնական նյութի յուրացման ընթացիկ դժվարությունները, բացթողումները բացահայտելուն և դրանք հաղթահարմանը,
- սովորողի մտածողության ու ճանաչողության ոլորտն ընդլայնելու համակարգված գործընթացի իրականացմանը,
- հետադարձ կապի կիրառմամբ ուսումնառության ոլորտում տեղեկություններ հավաքելու և արժևորելու միջոցով կրթական չափանիշների, ուսումնական ծրագրերի ու դասավանդման մեթոդների բարելավմանը:

Ուսուցանող գնահատման նպատակն է՝

- բարձրացնել ուսուցման և ուսումնառության գործընթացի արդյունավետությունը,
- բացահայտել, վեր հանել ուսումնական նյութի յուրացման դժվարությունները,
- սովորողին ուղղորդել գիտակցելու տվյալ նյութը սովորելու, բացթողումները շտկելու անհրաժեշտությունը,
- ճշգրտել դասավանդման ռազմավարությունների և կիրառվող մեթոդների, հնարների նպատակահարմարությունը:

Ուսուցանող գնահատումը կիրառվում է ուսումնական ողջ գործընթացում. սա անընդհատ և շարունակական է, քանի որ ուսուցանելու, գիտելիքներ և դրանց հիման վրա որոշակի կարողություններ ձևավորելու միտում ունի և միավորային գնահատում չի ենթադրում: Ձևավորող գնահատման օգնությամբ ուսուցիչը մշտապես դիտարկում, գրանցում, նկարագրում և պարբերաբար տեղեկացնում է սովորողին ձեռքբերումների, նրա ուժեղ և թույլ կողմերի մասին:

Ուսուցանող գնահատման նպատակով միջին դպրոցում կիրառվում են հետևյալ բնույթի աշխատանքներ՝ հետազոտական, ստեղծագործական, համագործակցային, քննարկումներ, որոնց շրջանակում կարող են լինել առաջադրանքների հետևյալ տեսակները՝ հայտորոշիչ թեստ, բանավոր ելույթ, ստուգող հարցաթերթ, բաց հարցերով քննարկում, խմբային/զույգային համագործակցային աշխատանքներ, գործնական աշխատանք, ինքնագնահատում և փոխադարձ գնահատում, թղթապանակի բովանդակության գնահատում, հաշվետվության ներկայացում և այլն:

Ուսուցանող գնահատման առաջադրանքների բովանդակությունը, տեսակը (ըստ կշռի և ըստ բովանդակության), առարկայական չափորոշիչներով ներկայացվող պահանջներին համապատասխանությունը, իրականացման հաճախականությունը, ուսուցչի դիտարկումների ձևաչափը մշակվում են յուրաքանչյուր ամբիոնի ներսում, հաստատվում է ամբիոնի ղեկավարի կողմից և ներկայացվում ՄԲ ՄԴԾ (IB MYP) համակարգողին: Մինչև ամփոփիչ աշխատանքը պետք է կազմակերպվի կշիռ ունեցող 2 /երկու/ ձևավորող աշխատանք, որոնք, առաջադրանքի տեսակով և բովանդակությամբ համարժեք լինելով, կնպաստեն ամփոփիչ աշխատանքի արդյունավետ կատարմանը: Կախված հետազոտական միավորի տևողությունից՝ թույլատրվում է անցկացնել կշիռ ունեցող միայն մեկ ձևավորող աշխատանք:

Ուսումնական առաջադիմության բարձրացման, ուսումնական արդյունավետ գործընթացի ապահովման նպատակով ճեմարանում կարևորվում է ընթացիկ աշխատանքների մշտադիտարկումը, մասնավորապես՝ սովորողի՝ դասին մասնակցությունը/ներգրավվածությունը, յուրացման առաջադրանքների, պարբերաբար իրականացվող ուսուցանող/ձևավորող աշխատանքների և դրանց անդրադարձի կատարումը: Սրանցից յուրաքանչյուրի մասին տեղեկությունը արձանագրվում է ՄԴԾ մատյաններում և հաշվի է առնվում ռեյտինգները հաշվարկելիս *(տե՛ս հավելված 4):*

Ընթացիկ աշխատանքների մշտադիտարկումը իրականացվում է համապատասխան սանդղակներով *(տե՛ս հավելված 5):*

6.1.2 ՄԻԱՎՈՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Միավորային (ամփոփիչ) գնահատումն ուսումնառության ընթացքում սովորողի ձեռքբերումների մակարդակը որոշակի միավորով՝ թվանշանով արտահայտելն է՝ համաձայն առարկայական չափորոշիչների *(տե՛ս հավելված 1):*

Միավորային գնահատման նպատակը սովորողի առարկայական գիտելիքների և դրանց հիման վրա ձևավորված կարողությունների մակարդակի բացահայտումն է, և կիրառվում է ուսումնական նյութի յուրացման աստիճանը ստուգելիս:

Միավորային գնահատումն իրականացվում է սովորողի գնահատականը գրանցելու-հաշվառելու միջոցով և ունի վերահսկող, ինչպես նաև հայտորոշիչ դեր. ուսուցիչը կարողանում է ճշտել ամեն սովորողի ձեռքբերումների որակը և մակարդակը, ապա ըստ այդմ՝ որոշակի փոփոխություններ մտցնել դասավանդման եղանակների, ուսուցման տեխնոլոգիաների և կիրառվող մեթոդների ոլորտում:

Յուրաքանչյուր կիսամյակի համար ՄԲ համակարգողը, համագործակցելով առարկայական բոլոր ամբիոնների ուսուցիչների հետ, կազմում է միավորային գնահատման օրացույց, որը տրամադրվում է ճեմարանական ողջ համայնքին:

Օրացույցում փոփոխություն կատարում է միայն ՄԴԾ համակարգողը, միավորային գնահատումից առնվազն 1 /մեկ/ շաբաթ առաջ:

Միավորային գնահատումից առնվազն մեկ շաբաթ առաջ ուսուցիչը աշխատանքի բովանդակության նկարագիրը և գնահատման սանդղակը ներկայացնում է աշակերտներին, նրանց ծնողներին:

Եթե աշակերտը հարգելի պատճառով բացակայել է և չի կատարել միավորային գնահատման առաջադրանքը, ապա դպրոց ներկայանալուց և անհրաժեշտության դեպքում ամբիոնում համապատասխան խորհրդատվություն ստանալուց հետո՝ առնվազն երկու շաբաթվա ընթացքում, լրացնում է բաց թողած աշխատանքը: Հարգելի պատճառով երկարատև բացակայած սաների բաց թողած ուսումնական նյութի լրացման համար տնօրենության կողմից կարող են սահմանվել այլ ժամկետներ:

Սահմանված ժամկետներում աշխատանքը չլրացնելու դեպքում սովորողը նախատեսված բոլոր չափանիշներից գնահատվում է «0» (զրո):

Եթե միավորային գնահատման կամ քննական առաջադրանքը կատարելիս սովորողը խախտում է ակադեմիական ազնվության կանոնները (հուշարարություն, գրագողություն, արտագրություն ընկերոջից կամ այլ աղբյուրներից), տվյալ աշխատանքն ընդհատվում է, գնահատվում է նվազագույն միավոր՝ 0 (զրո) նախատեսված բոլոր չափանիշներից՝ առանց աշխատանքը վերահանձնելու իրավունքի (տե՛ս «Ակադեմիական ազնվության քաղաքականություն» փաստաթուղթը):

Ուստարվա ընթացքում յուրաքանչյուր առարկայից առնվազն 2 անգամ կատարվում է գնահատում՝ յուրաքանչյուր չափանիշով (բոլոր ենթակետերով):

Միավորային գնահատման կիսամյակային ամփոփումը կատարվում է հետևյալ կերպ:

Ուսուցիչն ամփոփում է սովորողի կիսամյակը՝ ըստ ՄԲ սահմանված կարգի Ա, Բ, Գ, Դ չափանիշներով (տե՛ս «Տեսությունից դեպի գործողություններ» և առարկայական ուղեցույցները):

Այնուհետև Ա, Բ, Գ, Դ չափանիշների վերջնական ***միավորների*** պարզ գումարով, ըստ ներկայացված սանդղակի, վերածում ՄԲ ՄԴ-ի **գնահատականի** (*2-րդ հավելվածում նշված է 1-7 գնահատականների նկարագրությունը):*

Միավորային սահման	0-5	6-9	10-14	15-18	19-23	24-27	28-32
Թվանշան՝ ըստ ՄԲ ՄԴԾ-ի (MYP)	1	2	3	4	5	6	7
Թվանշան՝ ըստ Հանրակրթության պետական չափորոշչի	1	2 , 3	4	5	6,7	8	9,10

Սովորողի՝ յուրաքանչյուր չափանիշից ստացած միավորն է 0, 1, 2, 3, 4, 5, 6, 7 կամ 8 :

Այդ միավորները չեն կարող լինել տասնորդական թվեր, չեն կարող վերածվել տոկոսների:

Սովորողի տարեկան թվանշանը ձևավորվում է երկու կիսամյակային թվանշանների միջին թվաբանականով, որը կլորացվում է մինչև ամբողջ թիվ: Առանձին դեպքերում, երբ առարկան ուսումնասիրվում է մեկ կիսամյակ, տվյալ կիսամյակային թվանշանը նաև տարեկան վերջնական թվանշանն է: Եթե առարկան ուսումնասիրվում է շաբաթական 1 ժամ ժամաքանակով, այն ամփոփվում է տարեվերջին՝ ամբողջական դասընթացի ավարտին: Առանձին դեպքերում տնօրենությունը ևս կարող է հաստատել այն առարկաների ցանկը, որոնք կամփոփվեն տարեկան կտրվածքով, օր.՝ նոր ուսումնասիրվող առարկա, պլանավորված գնահատումն իրականացնելու անհնարինություն և այլն:

Կիսամյակի արդյունքներով 4 և ավելի բացասական թվանշաններ ունեցող սովորողների ծնողների հետ ընդհատվում է կրթական ծրագրի իրականացման պայմանագիրը, առանձին դեպքերում ճեմարանում ուսումնառությունը շարունակելու հետագա նպատակահարմարության հարցը քննարկվում է ճեմարանի տնօրենության խորհրդի կողմից:

5-ից 10-րդ դասարաններում առաջին կիսամյակի ամփոփումը համարվում է հայտորոշիչ, որի հիման վրա կատարվում է կիսամյակային ռեյտինգների հաշվարկ, վճարովի և համաֆինանսավորմամբ տեղերի բաշխում: Առաջին կիսամյակի ավարտին մինչև երեք անբավարար՝ 4-ից ցածր թվանշան ունեցող սաներին թույլատրվում է շարունակել ուսումը ճեմարանում՝ տվյալ առարկաներից ունեցած բացթողումների պատճառները բացահայտելու և դրանց շտկման համար ուսուցիչ-սան-ծնող եռակողմ կամ համագործակցային թիմի հանդիպման ժամանակ հստակ ռազմավարություն մշակելու և տվյալ առարկայի արդյունքները տարեկան ամփոփելու պայմանով: Առանձին դեպքերում, երբ առարկան, որից սովորողն ունի բացասական թվանշան, ուսումնասիրվում է միայն 1-ին կիսամյակում, սանի համար կազմակերպվում է վերահանձնում՝ առանձին ժամանակացույցով:

Եթե սովորողը երկրորդ կիսամյակի ավարտին ունենում է մինչև երեք անբավարար՝ 4-ից ցածր գնահատական, ապա նրան թույլատրվում է մասնակցել վերահանձնումներին:

Յուրաքանչյուր առարկայից ստացած անբավարար արդյունքի դեպքում վերահանձնելու համար սովորողին տրվում է երկու հնարավորություն: Առաջին վերահանձնումները անցկացվում են համապատասխանաբար հունվարի 10-20-ը, հունիսի 10-20-ը, երկրորդ վերահանձնումները՝ հունվարի 21-30 և հունիսի 21-30-ը* ժամանակահատվածներում: Սովորողն իրավունք ունի օգտագործելու վերահանձնման առաջին և/կամ երկրորդ հնարավորությունները: Միայն բացառիկ դեպքերում տնօրենության խորհրդի որոշմամբ կարող է նշանակվել վերահանձնում այլ ժամանակահատվածում:

Վերահանձնման առաջադրանքները, դրանց բովանդակային սահմանները, գնահատման սանդղակները մշակվում, կազմվում, քննարկվում են ամբիոնի նիստում, համաձայնեցվում են ՄԲ ՄԴԾ համակարգողի հետ, որից հետո տվյալ ուսուցիչը առաջադրանքների նկարագրությունը և գնահատման սանդղակը ներկայացնում է վերահանձնող սովորողին, անհրաժեշտության դեպքում նաև նրա ծնողին:

I և II վերահանձնումների դրական թվանշանին տրվում է կիսամյակային կամ տարեկան վերջնական թվանշանի կարգավիճակ:
Երկրորդ կիսամյակի ավարտին **II վերահանձնման** արդյունքում բացասական թվանշաններ ունեցող սովորողների՝ ճեմարանում ուսումնառությունը շարունակելու հարցը որոշում է տնօրենության խորհուրդը:
*Օրերը կարող են փոխվել ըստ տարեկան հաստատված ժամանակացույցի:

Առաջին կիսամյակի սկզբից 5 և ավելի ուսումնական շաբաթ հետո ընդունված սովորողների առաջադիմությունն ամփոփվում է տարեկան կտրվածքով, տնօրենության խորհուրդը կարող է թույլատրել սովորողներին շարունակել ուսումը մինչև ուսումնական տարվա ավարտ՝ անկախ բացասական կիսամյակային միջին թվանշանների քանակից:

5-րդ և 6-րդ դասարաններում հայոց լեզու և մաթեմատիկա առարկաներից նախատեսվում են տարեկան ամփոփիչ աշխատանքներ, որոնց տրվում է միավորային ամփոփիչ աշխատանքի կարգավիճակ:

7-րդ դասարանում հայոց լեզու, մաթեմատիկա, օտար լեզու և ռուսաց լեզու առարկաներից նախատեսվում են քննություններ, որոնց արդյունքները միջինացվում են տվյալ առարկաների տարեկան թվանշանների հետ՝ ձևավորելով տարեկան վերջնական գնահատականը, որի հիման վրա որոշվում է սովորողի տարեկան ռեյտինգը:

8-րդ դասարանում հայոց լեզու, մաթեմատիկա, օտար լեզուներ, բնագիտական և հասարակագիտական բոլոր առարկաներից նախատեսվում են տարեկան ամփոփիչ աշխատանքներ, որոնց տրվում է միավորային ամփոփիչ աշխատանքի կարգավիճակ:

9-րդ դասարանում պետական ավարտական քննությունների անցկացումը, գնահատումը և ամփոփումը կատարվում են ԿԳՄՍՆ կողմից սահմանված կարգով:

10-րդ դասարանում նախատեսվում են յուրաքանչյուր տարվա ուսումնական պլանով հաստատված առարկաներից քննություններ, որոնց արդյունքները միջինացվում են տվյալ առարկաների տարեկան թվանշանների հետ՝ ձևավորելով տարեկան վերջնական գնահատականը, որի հիման վրա որոշվում է սովորողի տարեկան ռեյտինգը:

Առարկայական ամբիոնների նախաձեռնությամբ մյուս առարկայական խմբերից ևս կարող են նախատեսվել տարեկան ամփոփիչ աշխատանքներ (ոչ միշտ գնահատվող), ելնելով առարկաների առանձնահատկություններից՝ օր.՝ սահիկաշարի ցուցադրում, ստուգատես, համերգ, մրցաշար և այլն:
Տնօրենության որոշման համաձայն ընթացիկ խնդիրներից, նպատակներից ելնելով՝ տարվա ընթացքում կարող են կազմակերպվել տնօրենական աշխատանքներ, որոնց կարգավիճակը որոշում է տնօրենության խորհուրդը՝ մանկավարժական առաջնորդության հետ համատեղ: Նման աշխատանքների ժամանակացույցը, գնահատման չափանիշները հաստատվում են առանձին կարգով:

6.1.3 Սովորողների՝ դասարանից դասարան փոխադրման կարգը

- Սովորողների փոխադրումը դասարանից դասարան թույլատրվում է միայն տարեկան դրական (4 և ավելի միավոր) վերջնական թվանշանների դեպքում:
- 9-րդ և 10-րդ դասարաններում կարևոր պայման է համարվում Համայնքային և Անհատական նախագծերի իրականացումը՝ որպես ՄԲ ՄԴԾ պարտադիր բաղադրիչներ:
- Փոխանակման ծրագրերով արտասահման մեկնած սովորողների համար ծնողի դիմումի համաձայն կարող է կազմակերպվել հեռավար ուսուցում: Եթե վերադառնալուց հետո սովորողը ցանկանում է ուսումը շարունակել ճեմարանում, հանձնում է ամփոփիչ թեստային աշխատանքներ, որոնցից դրական թվանշաններ ստանալու դեպքում թույլատրվում է վերականգնվել ճեմարանում և փոխադրվել հաջորդ դասարան:
- Բացառիկ դեպքերում, տնօրենության խորհրդի հատուկ որոշմամբ, թույլատրվում է փոխադրումը հաջորդ դասարան «անբավարար» կիսամյակային թվանշանով, եթե սովորողի գիտելիքները համապատասխանում են պետական առարկայական չափորոշիչային պահանջներին՝ մինչև հաջորդ ուսումնական տարվա I կիսամյակի ավարտը նախորդ նյութը վերահանձնելու պայմանով: Այդ դեպքում մատյանում դրվում է «անբավարար» թվանշանը և կցվում է խորհրդի որոշման պատճենը:
- Հատուկ կրթական կարիք ունեցող, այդ թվում՝ օժտված սովորողների գնահատման ժամանակ կարող է կիրառվել համեմատական աճի սկզբունքը (տե՛ս *Լեզուների* ուսուցման և Ներառական կրթության քաղաքականության փաստաթղթերը):

6.1.4 Գնահատման ստանդարտացում

Բոլոր տարիքային խմբերում, որտեղ դասավանդում են 1-ից ավելի ուսուցիչներ, պարտադիր է կազմակերպել միավորային աշխատանքների պլանավորման, բովանդակության, սանդղակների և արդյունքների ներքին ստանդարտացման գործընթաց՝ ապահովելով չափանիշների համանման ընկալումն ու կիրառումը բոլոր դասարաններում:

Ստանդարտացման հիմնական նպատակներն են
1. Ապահովել հուսալի, հավաստի և անաչառ գնահատում:
2. Ապահովել գնահատման չափանիշների միասնական, փոխհամաձայնեցված ըմբռնումը, մեկնաբանումը և կիրառումը:
3. Ապահովել ուսումնառության և գնահատման գործընթացի մոտեցումը:
4.Ապահովել գնահատման գործիքների, գնահատման սանդղակների և մեթոդների մշտադիտարկում և արդյունավետության բարձրացում:

Ստանդարտացման մասնակիցներն են՝ դասավանդող ուսուցիչները, կառույցների ղեկավարները, սաները, ծնողները, տնօրենությունը, համակարգողները՝ ըստ անհրաժեշտության և իրավիճակի:

Գնահատման ստանդարտացման ժամանակահատվածը: Ստանդարտացումն իրականացվում է յուրաքանչյուր կիսամյակում 2-3 անգամ և ըստ անհրաժեշտության:

Ստանդարտացման ընթացակարգը: Միջին դպրոցում գնահատման ստանդարտացման գործընթացը կազմակերպվում է 3 փուլով՝ ա)պլանավորում, բ) իրականացում, գ)գրանցում/ վերլուծում, անդրադարձ:

ա) Առարկայական խմբերում ստանդարտացման գործընթացն սկսվում է **պլանավորումից**: Տարիքային պատասխանատուները դասավանդող ուսուցիչների հետ **ստեղծում են**

հետազոտական միավորները՝ համապատասխան ձևավորող և ամփոփիչ գնահատման աշխատանքներով, որոնք նույնական են բոլոր տարիքային խմբերում:

բ) Ուսումնառության գործընթացի որոշակի փուլի ավարտին **իրականացվում է ստանդարտացված գնահատում** հետևյալ կերպ՝

- գնահատման գործընթացի կազմակերպում նույն ժամանակի ընթացքում հավասար պայմաններում.
- աշխատանքների գնահատում նույն մոտեցմամբ՝ ըստ գնահատման նույնական սանդղակների:

գ)գրանցում/ վերլուծում, անդրադարձ:

Գնահատման գործընթացից հետո **կազմակերպվում է գնահատման վերլուծում-անդրադարձ** հետևյալ կերպ. նույն տարիքային խմբերում դասավանդող ուսուցիչները գնահատում են տարբեր մակարդակների պատահականության սկզբունքով ընտրված 4 կամ 5 սանի աշխատանք, ամփոփում են արդյունքները, քննարկում, հարկ եղած դեպքում վերագնահատում են մնացած բոլոր աշխատանքները, լրամշակում առաջադրանքները, մոտեցումները, գնահատման սանդղակը: Ստանդարտացման արդյունքներն արձանագրվում են համապատասխան փաստաթղթում /տե՛ս հավելված 6/: Ստանդարտացման համար ընտրված աշխատանքների վերջնական գնահատական համարվում է ստանդարտացման գործընթացին մասնակից ուսուցիչների փոխհամաձայնեցված գնահատականը:

Գնահատման ստանդարտացում իրականացվում է նաև սովորողի/ծնողի կամ համակարգողի հայտի համաձայն:

Անհատական նախագծերի գնահատման ստանդարտացում

Նախագծերի գնահատման ստանդարտացման գործընթացն սկսվում է բուն գնահատումն իրականացնելուց առաջ: Նախապես կազմակերպվում են ԱՆ համակարգող-նախագծի ղեկավար համագործակցային հանդիպումներ, որոնց ընթացքում ուսումնասիրվում և քննարկվում են անհատական նախագծերի գնահատման սանդղակները, խմբային աշխատանքների միջոցով գնահատվում են նախորդ տարվա որոշ աշխատանքներ: Արդյունքում ԱՆ ղեկավարները ձեռք են բերում միանման մոտեցումներով գնահատելու կարողություն:

Նախագծային աշխատանքները ավարտելուց հետո ԱՆ ղեկավարները գնահատում են իրենց սաների հաշվետվությունները, որից հետո ԱՆ ղեկավարների թիմից յուրաքանչյուրին կցվում է երկրորդ մասնագետը՝ միևնույն աշխատանքը գնահատելու, վերջնական միավորը որոշելու, վերջնարդյունքները ամփոփելու նպատակով:

6.2 ԳՐԱՆՑՈՒՄ (RECORDING)

Միավորային գնահատման, ինչպես նաև սովորողի ընթացիկ աշխատանքների մշտադիտարկման արդյունքները գրանցվում են ՄԴԾ թղթային և էլեկտրոնային մատյաններում:

Միավորային գնահատման առաջադրանքը ուսուցիչը մեկ կամ երկու շաբաթվա ընթացքում ստուգում և ներկայացնում է աշակերտներին. ամեն աշակերտ տեղեկանում է իր

աշխատանքի ուժեղ և թույլ կողմերի, սխալների մասին, անհրաժեշտության դեպքում ստանում է լրացուցիչ առաջադրանքներ և հանձնարարություններ՝ թեմայի բացթողումները լրացնելու համար:

Միավորային գնահատում իրականացնելու վերջնաժամկետը կիսամյակում տվյալ առարկայի նախավերջին դասն է:

6.3 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

6.3.1. Կիսամյակային հաշվետվություն

Ներկայացվում է *կիսամյակի վերջում*, որը ներառում է՝

- տեղեկություն կիսամյակի ընթացքում սովորողի հաճախելիության մասին.
- ուսումնական գործընթացում սովորողի մասնակցության և դրսևորած նախաձեռնողականության մասին.
- ուսումնառության մոտեցումների, սովորողների կարողությունների ձեռքբերման և դրանց դրսևորման գործընթացի մասին.
- ուսուցչի դիտարկումները և ուսումնական գործընթացի բարելավման համար տրված խորհուրդները.
- տվյալ առարկայի և միջառարկայական ուսուցման չափորոշիչների 4 խմբերին համապատասխան սովորողի կիսամյակային՝ ՄԴԾ գնահատականները և դրանց համարժեք ՀՀ պետական չափորոշչի գնահատականները:

6.3.2. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ընթացիկ հաշվետվությունը ծնողին և/կամ սանին պարբերաբար, նաև ըստ անհրաժեշտության տրվող տեղեկություն է, այն ներառում է սովորողի ձեռքբերումները կամ բացթողումներն ըստ չափորոշիչների, միավորային գնահատականները, անհրաժեշտության դեպքում՝ ուսուցչի և մանկավարժի դիտարկումները, ինչպես նաև ուսումնառության բարելավման համար տրված խորհուրդները:

6. 3. 3. Ծնողական խորհրդաժողովներ

Ուսումնական տարվա ընթացքում 3 անգամ հրավիրվում են ծնողական խորհրդաժողովներ, որոնց ընթացքում ներկայացվում են `

- առարկայի բովանդակային սահմանները.
- տվյալ առարկայի դասավանդման նպատակները և կենսական անհրաժեշտությունը.
- դասավանդման մեթոդական համակարգը և սովորողի դերը ուսումնառության գործընթացում.
- սովորողի ձեռքբերումները, բացթողումները և դրանց շտկման ուղիները:

6.3.4. Աշակերտական խորհրդաժողովներ

Ուսումնական տարվա ընթացքում յուրաքանչյուր կիսամյակի ավարտին, ինչպես նաև ըստ անհրաժեշտության կիսամյակի ընթացքում կազմակերպվում են աշակերտական խորհրդաժողովներ *(եռակողմ հանդիպում՝ ծնող-ուսուցիչ-աշակերտ),* որոնց ընթացքում սովորողները ծնողներին, խմբի մանկավարժին, տնօրենության խորհրդի ներկայացուցիչներին և դասավանդող ուսուցիչներին են ներկայացնում իրենց

ձեռքբերումները, թերացումները, դրանք հաղթահարելու ուղղությամբ կազմակերպելիք աշխատանքները, ինչպես նաև ուսումնական թղթապանակների բովանդակությունը:

7. ՍՈՎՈՐՈՂԻ ՆԿԱՐԱԳՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Միջազգային բակալավրիատի բոլոր երեք ծրագրերի համար առանցքային նշանակություն ունի սովորողի նկարագրի բնութագրիչների և միջազգային մտածողության ձևավորումը:

Սովորողի նկարագրի բաղադրիչների ձևավորման գնահատումը և այդ մասին տեղեկության վերլուծությունը կատարվում են տարբեր միջոցներով.

- անհատական թղթապանակների վարում.
- համադպրոցական քննարկումներ.
- տողանների անցկացում.
- կիսամյակային հաշվետվություններ

8. ՄԲ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Միջին դպրոցում իրականացվող նախագծերն են՝

- 5-ից 8-րդ դասարաններում՝ Ծառայության նախագիծ (ԾՆ),
- 9-րդ դասարանում՝ Համայնքային նախագիծ (ՀՆ),
- 10-րդ դասարանում՝ Անհատական նախագիծ (ԱՆ):

Նշված նախագծային աշխատանքների ամփոփումներում ներկայացվում են սովորողների վերջնական ձեռքբերումները և հմտությունները:

Ծառայության, համայնքային և անհատական նախագծերի իրականացումը կազմակերպվում է ըստ նախապես մշակված ժամանակացույցի (*տե՛ս ՄԴԾ նախագծերի ուղեցույց*): Նախագծերի իրականացման ժամկետները պարբերարաբար խախտող կամ անհարգելի պատճառով նախագիծը չիրականացրած սովորողների՝ հաջորդ դասարան տեղափոխվելու հարցը քննարկվում է տնօրենության խորհրդի նիստում:

ՄԴԾ-ի նախագծերի գնահատումը իրականացվում է Համայնքային և Ծառայության նախագծերի դեպքում՝ հետազոտում, պլանավորում, գործողությունների/քայլերի մշակում և վերլուծություն, իսկ Անհատական նախագծի դեպքում՝ պլանավորում, հմտությունների կիրառում և անդրադարձ չափանիշներով: Այդ նախագծերի իրականացման ընթացքը հնարավորություն է տալիս սովորողին կիրառելու ՄԴ ուսումնառության ընթացքում ձեռք բերած կարողությունները, հմտությունները, ինչպես նաև արտացոլում է սովորողի նկարագրի բնութագրիչների մակարդակը:

10-րդ դասարանցիների անհատական բոլոր նախագծերը ներկայացվում են ՄԲ գրասենյակ՝ արտաքին գնահատման համար:

9. ԴՊՐՈՑԻ, ՈՒՍՈՒՑՉԻ, ՍԱՆԵՐԻ և ԾՆՈՂՆԵՐԻ ԴԵՐԸ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

9.1. Դպրոցի տնօրենության խորհրդի դերը

Տնօրենության խորհուրդը մասնակցում է դպրոցական լիարժեք համայնք կառուցելուն և զարգացնելուն՝ ճեմարանական համայնքի բոլոր անդամներին տրամադրելով սովորողների ուսումնառության, գնահատման արդյունքների վերաբերյալ հավաստի և անհրաժեշտ տեղեկություններ, ինչպես նաև մասնակցում է գնահատման քաղաքականության

լրամշակման, վերանայման գործընթացներին, հաստատում է այն և իրականացնում ընդհանուր վերահսկողությունը:

9.2. Ուսուցչի դերը

- *Ուսուցիչը* հստակորեն տիրապետում է ՀՀ պետական և Միջազգային բակալավրիատի փաստաթղթերով ներկայացվող պահանջներին, համագործակցում է իր հանձնախմբի և առարկայական մյուս հանձնախմբերի ուսուցիչների հետ, ըստ հետազոտական միավորի՝ կազմում է նպատակային գնահատման առաջադրանքները և դրանց գնահատման սանդղակները: Սովորողներին տրամադրում է լիարժեք տեղեկություն գնահատման գործընթացի (օրը, առաջադրանքի տեսակը, գնահատման չափանիշները) մասին:
- Ըստ չափանիշների ստուգում է առաջադրանքը և ապահովում հետադարձ կապ. արդյունքները վերլուծում և քննարկում է սովորողների, անհարժեշտության դեպքում՝ ծնողների, առարկայական հանձնախմբի մյուս ուսուցիչների հետ, կատարում է գնահատման ստանդարտացում:
- Սովորողի առաջադիմության, կարողությունների և հմտությունների *(ATL)*, ձեռքբերումների և բացթողումների մասին ընտանիքին լիարժեք և հավաստի տեղեկություն է տրամադրում:
- ՄԲ ուսուցիչը, հանդես գալով նաև որպես լեզվի ուսուցիչ, հատուկ ուշադրություն է դարձնում իր առարկայի շրջանակում սանի լեզվի կիրառման որակին և նրա հաղորդակցման կարողությանը՝ դրանց կշիռ տալով գնահատման սանդղակներում (տե՛ս «Լեզուների ուսուցման քաղաքականություն» փաստաթուղթը):

9.3. Սովորողի դերը

Սովորողներն ակտիվ դեր ունեն գնահատման գործընթացում. նրանք ուսուցման գործընթացի վերլուծություն են կատարում, հասկացությունների և տարբեր երևույթների վերաբերյալ իրենց ուրույն ընկալումներն են դրսևորում՝ քննադատական, վերլուծական մտածողության, ինքնագնահատման և փոխգնահատման կարողությունները զարգացնելու նպատակով: Ուսումնառության որոշակի փուլերում սովորողի կողմից իր ձեռքբերումների և բացթողումների վերաբերյալ կատարած անդրադարձը նպաստում է առաջադիմության բարելավմանը, ինչպես նաև օգնում է ուսուցիչներին լրամշակելու գործող հետազոտական միավորները և գնահատվող առաջադրանքները:

9.4. ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵՐԸ

Ծնողները տեղեկանում են իրենց զավակի(ների) ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների դրսևորումների մասին: Նրանք ստանում են իրենց երեխայի(ների) անհատական զարգացման և ուսումնական գործունեության վերաբերյալ հավաստի և լիարժեք տեղեկություն՝ դպրոցի կրթադաստիարակչական աշխատանքներին աջակցելու նպատակով:

10. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՌԱՆՁԻՆ ԴԵՊՔԵՐԸ

Առնչություններ լեզուների դասավանդման, ակադեմիական ազնվության փաստաթղթերով սահմանված դրույթներին *(տե՛ս «ՀԿԿ/ ներառական կրթության քաղաքականություն»)*

10.1 **Լեզվի քաղաքականություն**: Եթե սովորողի մայրենի լեզուն հայերենը չէ, ապա նրա համար կազմվում է ուսուցման անհատական ծրագիր, գնահատման առաջադրանքը, սանդղակը (ռուբրիկ) կազմվում են սովորողի մայրենի լեզվով:

10.2 **Ներառական (inclusive) կրթության քաղաքականություն:** Եթե սովորողն ընդունվում է ճեմարան՝ ունենալով այնպիսի խնդիրներ, որոնք նկարագրված են «**Ներառական (inclusive) կրթություն**» փաստաթղթում, ապա նրա գնահատումը կազմակերպելու նպատակով դասավանդող ուսուցիչները, հոգեբանական և մանկավարժական ծառայությունները կազմում են համապատասխան փաստաթուղթ:

10.3 **Անհատական ուսուցում:** Եթե սովորողն ընդունվել է ճեմարան և ունի մեկ (կամ մի քանի) առարկայից գիտելիքների և դրանք կիրառելու կարողության ոչ բավարար դրսևորումներ, ապա նրա գնահատումը իրականացնելու համար մշակվում է անհատական ծրագիր՝ թույլատրելով գնահատումը կատարել համեմատական աճի սկզբունքով: Սովորողի անհատական ծրագիրը հաստատում է տվյալ առարկայական խմբի ղեկավարը և ՄԲ ՄԴԾ համակարգողը *(տե՛ս* Անհատական ուսուցման կազմակերպման կարգ*)*:

10.4 **Ակադեմիական ազնվության քաղաքականություն**: Սաների կողմից ակադեմիական անազնվության (արտագրության, ծածկագրերի օգտագործման, հուշարարության…, տե՛ս «Ակադեմիական ազնվության քաղաքականություն» փաստաթուղթը) ցանկացած փորձ անհարիր է ճեմարանի և ՄԲ-ի (IB) սկզբունքներին և նպատակներին և համարվում է անթույլատրելի երևույթ: Ակադեմիական ազնվության սկզբունքները անվերապահորեն պետք է պահպանվեն ցանկացած աշխատանք իրականացնելիս (յուրացման առաջադրանք, խմբային աշխատանք, ձևավորող գնահատվող աշխատանք և այլն):

10.5 **Հեռավար ուսուցում:** Հիվանդության կամ այլ հարգելի պատճառով երկարատև բացակայող սովորողի հետ ծնողի դիմումի համաձայն կարող է կազմակերպվել հեռավար ուսուցում համաձայն ճեմարանում գործող հեռավար ուսուցման կազմակերպման կարգի: Այդ ընթացքում գնահատումն իրականացվում է սույն կարգի բոլոր դրույթների պահպանմամբ: Բացառություն են կազմում գրավոր միավորային աշխատանքները, որոնք կազմակերպվում են սանի՝ առկա ուսուցման վերադառնալուն պես, առանձին ժամանակացույցով:

11. ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

11.1 «Գնահատման քաղաքականություն» փաստաթուղթը գրված է երկու լեզվով՝ հայերեն և անգլերեն:

11.2 Այս փաստաթուղթը զետեղված է դպրոցի կայքում, էլեկտրոնային փոստով ուղարկվում է բոլորին և հասանելի է դպրոցական ողջ համայնքին:

11.3 Ողջ դպրոցական համայնքը պատասխանատու է գնահատման քաղաքականության իրականացման համար:

11.4 Դպրոցական համայնքը յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում /անհրաժեշտության դեպքում այլ ժամկետներում/ կազմակերպում է «Գնահատման քաղաքականություն» փաստաթղթի վերանայման և լրամշակման գործընթացը:

Այսպիսով՝ արդյունավետ գնահատումը հնարավորություն է տալիս

Սովորողներին՝

- կիրառելով ուսումառության տարբեր ձևեր և մտածողության որակներ՝ դրսևորել գիտելիքների, հասկացությունների ընկալում և դրանք համապատասխան իրադրության մեջ կիրառելու կարողություն.

- նախապես տեղեկանալ և հասկանալ այն չափանիշները, որոնց հիման վրա պետք է գնահատվեն իրենց աշխատանքի արդյունքները, վերլուծել իրենց և ուրիշների ուսումնառությունը և բացահայտել՝ այդ գործընթացում ինչը բարելավման կարիք ունի.
- սովորածը հաղորդել կամ սովորեցնել ուրիշներին:

- *Ուսուցիչներին՝*
- տեղեկատվություն ստանալ ուսուցման յուրաքանչյուր փուլի մասին՝ հաշվի առնելով սովորողների պահանջները և ուսուցիչների ուսումնասիրությունները.
- մշակել և զարգացնել ուսուցման արդյունավետ մոտեցումներ՝ հաշվի առնելով յուրաքանչյուր սովորողի անհատական առանձնահատկությունները, մտավոր կարողություններն ու մշակութային արժեքների տարբերությունները .
- համագործակցաբար վերլուծել և բարելավել սովորողների առաջընթացը:

Ծնողներին՝

ծանոթանալ և արձագանքել երեխայի(ների) ուսումնական առաջընթացին, զարգացումն արձանագրող փաստերին և տեղեկատվությանը:

Հավելվածներ

1-ին հավելված: Առարկայական չափորոշիչները

Առարկա	**A**	**B**	**C**	**D**
Լեզու և գրականություն (մայրենի)	Վերլուծում	Մտքի համակարգում	Տեքստի ստեղծում	Լեզվաոճական գիտելիքների կիրառում
Օտար լեզու /Language acquisition/	Բանավոր խոսքի ընկալում	Գրավոր խոսքի ընկալում	Բանավոր հաղորդակցում	Գրավոր հաղորդակցում
Գիտություն	Գիտելիք և ըմբռնում	Հարցադրում և նախագծում	Գործընթաց և զարգացում	Անդրադարձ գիտությանը
Անհատ և հասարակություն	Գիտելիք և ըմբռնում	Հետազոտում	Հաղորդակցում	Քննադատական մտածողության դրսևորում
Մաթեմատիկա	Գիտելիք և ըմբռնում	Օրինաչափությունների բացահայտում	Հաղորդակցում	Մաթեմատիկական գիտելիքների կիրառումը կյանքում
Արվեստ (Art)	Գիտելիք և ըմբռնում	Կարողությունների զարգացում	Ստեղծագործական մտածողության դրսևորում	Արձագանքում
Ֆիզիկական կրթություն և առողջ ապրելակերպ	Գիտելիք և ըմբռնում	Ներկայացման պլանավորում	Կիրառում և ներկայացում	Ներկայացման կատարելագործում ըստ անդրադարձի
Դիզայն	Հետազոտում և վերլուծում	Գաղափարների զարգացում	Լուծումների ստեղծում	Զարգացում /գնահատում/
Անհատական նախագիծ	Պլանավորում	Հմտությունների կիրառում	Անդրադարձ	

Միջառարկայական կապ	Գնահատում	Համադրում/Սինթեզում/	Անդրադարձ	

2-րդ հավելված . ՄԲՄԴ-ի (MYP) միավորային գնահատականի նկարագրությունը

Միավոր	**Նկարագրություն**
1	Սովորողը նվազագույն ձեռքբերումներ ունի չափորոշչային սանդղակներով ներկայացվող պահանջներից:
2	Սովորողը շատ սահմանափակ ձեռքբերումներ ունի չափորոշչային սանդղակներով ներկայացվող պահանջներից: Դժվարանում է պահանջվող գիտելիքները հասկանալուց և կարողությունները դրսևորելուց, ծանոթ իրավիճակներում նույնիսկ աջակցության դեպքում դրանք կիրառելուց:
3	Սովորողը սահմանափակ ձեռքբերումներ ունի չափորոշչային սանդղակներով ներկայացվող պահանջներից և դժվարանում է որոշակի ոլորտներում: Դրսևորում է սահմանափակ կարողություններ պահանջվող գիտելիքները հասկանալու և դրանք կիրառելու գործում: Նա դա կարող է անել միայն ծանոթ իրավիճակներում և աջակցության դեպքում:
4	Սովորողը բավարար չափով ըմբռնել է պահանջվող գիտելիքները և ի վիճակի է դրանց հիման վրա ձևավորված կարողություններն արդյունավետորեն կիրառելու սովորական կամ եզակի իրավիճակներում: Հազվադեպ է վերլուծական, համադրական մտածական կարողութուններ դրսևորում և գնահատական տալիս:
5	Սովորողը լավ ըմբռնել է պահանջվող գիտելիքները և ի վիճակի է դրանց հիման վրա ձևավորված կարողությունները արդյունավետորեն կիրառելու նաև տարբեր իրավիճակներում: Ընդհանուր առմամբ վերլուծական, համադրական մտածական կարողություններ է դրսևորում և գնահատական է տալիս:
6	Սովորողը լավ ըմբռնել է պահանջվող գիտելիքները և ի վիճակի է դրանց հիման վրա ձևավոր ված կարողությունները արդյունավետորեն կիրառելու բազմաբնույթ իրավիճակներում: Հիմնականում միշտ դրսևորում է վերլուծական, համադրական մտածական կարողություններ և համապատասխան գնահատական է տալիս: Սովորողը ընդհանուր առմամբ դրսևորում է յուրահատուկ մոտեցումներ և ներզգացողություն (ինտուիցիա):

7	Սովորողը խորապես ըմբռնել է պահանջվող գիտելիքները և ի վիճակի է դրանց հիման վրա ձևավորված կարողությունները միշտ անթերի և արդյունավետորեն կիրառելու բազմաբնույթ իրավիճակներում: Միշտ դրսևորում է վերլուծական, համադրական մտածական հմտություններ և տալիս է գնահատական: Հիմնականում միշտ դրսևորում է յուրահատուկ մոտեցումներ և ներզգացողություն (ինտուիցիա), միշտ կատարում և ներկայացնում է որակյալ աշխատանք:

3-րդ հավելված: Ռազմավարությունները, միջոցները և առաջադրանքները

3.1 *Գնահատման ռազմավարություններ և միջոցները*

Ուսուցիչներն ազատ են ըստ նպատակի ընտրելու գնահատման ռազմավարությունները և կիրառելու անհատական կամ խմբային աշխատանքի գնահատման ցանկացած տեսակ:

Գնահատման ռազմավարությունները և միջոցները					
	Գնահատման միջոցներ				
Գնահատման ռազմավարություններ	Սանդղակներ /rubrics/	Օրինակներ /examples/	Ստուգման թերթիկներ /checklists/	Կարճ գրառումներ /anecdotal record/	Հաջորդա-կանություն /continuums/
Դիտարկում /Observation/	√		√	√	√
Առաջադիմության գնահատում /performance assessment/	√	√		√	√
Գրանցումների մատյանի վարում /process journals/	√		√	√	√
Ընտրովի պատասխաններով առաջադրանք /Selected response/		√	√		√
Բազմակի պատասխաններով առաջադրանք /open-ended tasks/	√	√		√	√

3.2 Գնահատման առաջադրանքներ /Assessment task/

- Ստեղծագործական աշխատանք (տեքստային, երաժշտական, դերասանական, գեղանկարչական և այլն)
- Ճանազան խնդիրների լուծման եղանակների առաջադրում
- Էսսե
- Հարցարանային աշխատանք
- Վերջնարդյունքի/պրոդուկտի ստեղծում
- Հետազոտություն
- Ներկայացում
- Շնորհանդես կամ ցուցադրություն՝ թե՛ գրավոր, թե՛ բանավոր, ինչպես նաև գրաֆիկական՝ պատկերների միջոցով

3.3 ***Գնահատման ձևաթղթեր***

Միջին դպրոցի ծրագրով ուսանելու (ՄԴԾ) ողջ ընթացքում սովորողների ուսումնառության վերաբերյալ տվյալների արձանագրումը բոլոր սովորողների համար գնահատման ռազմավարություն է: Ուսուցիչներն այդ նպատակով կիրառում են տարաբնույթ մեթոդներ և սովորողների ձեռքբերումների արձանագրման ձևեր՝ այդ թվում նաև տեսալուսանկարչական միջոցներ, համառոտ գրառումներ և այլն:

Կիրառվող փաստաթղթերից են մատյանները՝ թղթային և էլեկտրոնային, կիսամյակային աշխատանքների ամփոփ բնութագրի աղյուսակը, թղթապանակը:

Թղթապանակ

Թղթապանակը ուսումնական գործընթացի վերաբերյալ տեղեկատվության կուտակման և պահպանման լավագույն տարբերակներից մեկն է, որը սովորողի առաջընթացն ու ձեռքբերումները տեսանելի դարձնելուն է ծառայում: Սա յուրաքանչյուր սովորողի «ուսումնառության պատմությունն» է, նրա հաջողությունների, անձի զարգացման և ստեղծարար աճի վկայությունը՝ որոշակի օրինակների ու ուղեկցող դիտարկումների տեսքով:

Սովորողն ունենում է մեկ մեծ թղթապանակ, որտեղ յուրաքանչյուր առարկայի համար բաժին է առանձնացված: Թղթապանակում առկա է նաև անձնական ձեռքբերումների բաժին, որտեղ անդրադարձ է կատարվում սովորողի նկարագրի բաղադրիչներին:

Թղթապանակում տեղադրվում են՝

- սովորողի ընթացիկ և յուրացման աշխատանքները, որոնք ուսուցիչը նպատակահարմար է գտել պահպանել թղթապանակում.
- ձևավորող գնահատման անդրադարձը, որն իրականացրել են ուսուցիչը և սանը,
- թղթապանակը կազմվում է մեկ ուսումնական տարվա համար և տարեվերջյան ծնողական հանդիպման ժամանակ հանձնվում է սովորողի ընտանիքին:
- Լսարաններում առանձնացված է թղթապանակների համար հատուկ տեղ:
- Թղթապանակը կարող է կազմակերպվել նաև էլեկտրոնային ձևաչափով:

Թղթապանակն օգտագործվում է ուսուցիչ-ծնող հանդիպումների ժամանակ (ավելի մանրամասն տե՛ս «Սովորողի թղթապանակ» փաստաթղթում):

4–րդ հավելված: Ռեյտինգների հաշվարկման կարգ

Ճեմարանի սովորողի ընդհանուր առաջադիմության չափանիշը նրա բացարձակ ռեյտինգն է՝ նախորդ ուստարվա* կամ կիսամյակի արդյունքներով:

4.1. Բացարձակ ռեյտինգը (R) հաշվարկվում է բոլոր առարկաների գնահատականների և ընթացիկ աշխատանքների հիման վրա՝ հաշվի առնելով այդ առարկաների շաբաթական ժամաքանակը/ պայմանով, որ բոլոր առարկաների կիսամյակները դրական են/ *(տե՛ս ուսումնական պլան):*

R-ը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$R=\frac{\sum_{i=1}^{n} G_i \cdot T_i}{T}$$

յուրաքանչյուր առարկայի շաբաթական ծանրաբեռնածության և հաշվարկային գնահատականի արտադրյալների գումարը՝ բաժանելով շաբաթական ընդհանուր ծանրաբեռնվածության վրա և արտահայտվում տոկոսներով:

G_i– հաշվարկային գնահատականն է, որի հաշվարկը իրականացվում է հիմք ընդունելով կիսամյակային առաջադիմությունը և կատարողական աշխատանքը.

$$G_i = \left(\frac{A}{7} \cdot 0{,}85 + \frac{F}{4} \cdot 0{,}1 + \frac{K}{8} \cdot 0{,}05\right) \cdot 100\%$$

A– Կիսամակային գնահատական,(նվազագույնը՝ 1, առավելագույնը՝ 7).

F- Ձևավորող աշխատանքների միավորների միջին (նվազագույնը՝ 1, առավելագույնը՝ 4, թղթապանակի գնահատումը համարժեք է մեկ ձևավորող աշխատանքի).

K– Կիսամյակային կատարողական աշխատանք (դասի մասնակցության միջին միավոր գումարած յուրացման աշխատանքի միջին միավոր, յուրաքանչյուրի համար նվազագույնը՝ 1, առավելագույնը՝ 4).

T_i– առարկայի շաբաթական ծանրաբեռնածություն.

T– շաբաթական ընդհանուր ծանրաբեռնվածություն.

Σ– դասավանդվող առարկայի շաբաթական ծանրաբեռնածության և հաշվարկային գնահատականի արտադրյալների գումար:

Հաշվարկային գնահատականի **85%** կազմում է տվյալ առարկայի կիսամյակային գնահատականը, **5%՝** ընթացիկ կատարողական աշխատանքը (յուրացման առաջադրանքների կատարումը և դասերին մասնակցությունը), իսկ **10%՝** կշիռ ունեցող ձևավորող աշխատանքների կատարումը, այդ թվում և թղթապանակի կիսամյակային գնահատումը:

Յուրացման առաջադրանքների, ձևավորող աշխատանքների կատարումը և դասին մասնակցությունը գնահատվում են քառամակարդակ սանդղակով (տե՛ս հավելված 5):

4.2. Հարաբերական ռեյտինգը հաշվարկվում է վերահանձնումներից դրական գնահատականներ ստացած սովորողների խմբի (դասարանի) տարեկան կամ կիսամյակային գնահատականների միջոցով:

5. Այն սովորողները, որոնք ունեն՝

ա) տվյալ կիսամյակում կամ ուստարում 95% և բարձր բացարձակ ռեյտինգ և ոչ ավելի քանի 2 հատ 8 (ՀՀ) (ՄԲ գնահատման համակարգով՝ 6) տարեկան կամ կիսամյակային վերջնական թվանշաններ, համարվում են ճեմարանի ***«ոսկեփայլ»*** սաներ:

բ) տվյալ կիսամյակում կամ ուստարում 90% և բարձր բացարձակ ռեյտինգ և ոչ ավելի քան 5 հատ 8 (ՀՀ) (ՄԲ գնահատման համակարգով՝ 6) տարեկան կամ կիսամյակային վերջնական թվանշաններ, համարվում են ճեմարանի ***«արծաթափայլ»*** սաներ:

գ) տվյալ կիսամյակում կամ ուստարում 85% և բարձր բացարձակ ռեյտինգ և ՄԲ գնահատման համակարգով՝ 5-ից բարձր թվանշաններ ունեցող սովորողները համարվում են ճեմարանի ***«փայլուն»*** սաներ:

*Տարեկան ռեյտինգը ձևավորվում է 2 կիսամյակների թվաբանական միջինով: Միայն 7-րդ և 10-րդ դասարանների տարեկան ռեյտինգները հաշվարկվում են 6.1.2 կետում նշված սկզբունքով:

5-րդ հավելված: Սանի ընթացիկ աշխատանքի գնահատում

Դասի մասնակցության / ներգրավածության մակարդակ		
4	Գերազանց	• Հետևողականորեն դրսևորում է գերազանց պատրաստականություն՝ դասաժամին մշտապես կատարելով հանձնարարված առաջադրանքները, ներկայացնելով անհրաժեշտ նյութերը: • Դասի ընթացքում մշտապես ակտիվորեն մասնակցում է, կատարում է դիտարկումներ, տեղին հարցադրումներ, մասնակցում բանավեճերին և արդյունավետ համագործակցում ընկերների հետ: • Դասի ընթացքում գերազանցապես դրսևորում է հարգանք թե՛ ուսուցչի և թե՛ ընկերների նկատմամբ: • Առավելագույնս նպաստում է ուսման և ուսուցման բարենպաստ միջավայրի ստեղծմանը:
3	Լավ	• Դասի ընթացքում հիմնականում դրսևորում է լավ պատրաստականություն՝ կատարելով հանձնարարված առաջադրանքները, ներկայացնելով անհրաժեշտ նյութերը: • Դասի ընթացքում մեծ մասամբ ապահովում է մասնակցության անհրաժեշտ մակարդակ. կատարում է դիտարկումներ, տեղին հարցադրումներ, մասնակցում բանավեճերին և արդյունավետ համագործակցում ընկերների հետ: • Հիմնականում դրսևորում է հարգանք թե՛ ուսուցչի և թե՛ ընկերների նկատմամբ: • Հիմնականում նպաստում է ուսումնառության բարենպաստ միջավայրի ստեղծմանը:
2	Բավարար	• Դասի ընթացքում հազվադեպ է ցուցադրում դասապատրաստման անհրաժեշտ մակարդակ՝ կատարելով հանձնարարված առաջադրանքները և ներկայացնելով անհրաժեշտ նյութերը: • Դասի ընթացքում հազվադեպ է ապահովում մասնակցության անհրաժեշտ մակարդակ, կատարում դիտարկումներ՝ կապված քննարկվող հարցերի հետ, պասիվ է դասարանային քննարկումների ընթացքում, դժվարությամբ է համագործակցում դասընկերների հետ:

		• Հազվադեպ է դրսևորում հարգանք ուսուցչի և ընկերների նկատմամբ: • Հազվադեպ է նպաստում ուսումնառության բարենպաստ միջավայրի ստեղծմանը:
1	Անբավարար	• Դասի ընթացքում չի դրսևորում դասապատրաստման անհրաժեշտ մակարդակ, չի կատարում հանձնարարված առաջադրանքները, չի ներկայացնում համապատասխան նյութեր: • Դասի ընթացքում չի ապահովում մասնակցության անհրաժեշտ մակարդակ, չի կատարում դիտարկումներ՝ կապված քննարկվող հարցերի հետ, չի մասնակցում դասարանային քննարկումներին, չի համագործակցում դասընկերների հետ: • Բացակայում է հարգանքի դրսևորումը ուսուցչի և դասընկերների նկատմամբ, աչքի չի ընկնում քաղաքավարությամբ: • Առանձնապես նախանձախնդիր չէ ուսուցման և ուսումնառության բարենպաստ միջավայրի ստեղծման համար:

Ձևավորող գնահատվող աշխատանքների իրականացում		
4	*Գերազանց*	Սովորողը արդյունավետ կատարել է բոլոր հանձնարարությունները՝ ըստ ներկայացված պահանջների: Ձևավորող առաջադրանքների կատարման որակը փաստում է համապատասխան հմտությունների անընդհատ զարգացման մասին:
3	*Լավ*	Սովորողը կատարել է հանձնարարությունների մեծամասնությունը՝ որոշ թերացումներով: Ձևավորող առաջադրանքների արդյունքները ցույց են տալիս առաջընթաց և անհրաժեշտ հմտությունների զարգացման լավ մակարդակ:
2	*Բավարար*	Սովորողը կատարել է հանձնարարությունների առնվազն կեսը: Ձևավորող առաջադրանքների արդյունքները ցույց են տալիս առաջընթաց և համապատասխան հմտությունների զարգացման բավարար մակարդակ:
I	*Անբավարար*	Կատարված աշխատանքը չի բավարարում պահանջներին: Ձևավորող առաջադրանքների արդյունքները չեն արտացոլում սովորողի առաջընթացը եւ անհրաժեշտ հմտությունների զարգացումը:

Յուրացման առաջադրանքների իրականացում		
4	*Գերազանց*	Սովորողը լիարժեք կատարել է բոլոր հանձնարարությունները:
3	*Լավ*	Սովորողը մեծ մասամբ կատարել է հանձնարարությունները որոշ թերացումներով:
2	*Բավարար*	Սովորողը մասամբ է կատարել հանձնարարությունները:

I	*Անբավարար*	Կատարված աշխատանքը չի բավարարում պահանջներին:

6-րդ հավելված: Գնահատման ստանդարտացման ձևաթուղթ

Առարկայական հանձնախումբ, առարկա _____

Ամփոփիչ աշխատանքի տեսակ՝_____ _____

Ամիս- ամսաթիվ՝_____

Աշակերտի անուն ազգանուն, խումբ	Ա	Բ	Գ	Դ	Աշխատանքը գնահատող ուսուցչի անուն ազգանուն	Ուսուցչի ստորագրություն
Վերջնական գնահատական						

Եզրակացություն/հիմնավորում՝

_____

_____

_____

Ամբիոնի ղեկավարի ստորագրություն՝